

Դափնոյ տերեւն . — Դափնին գրեթէ առածածային բան մ' էր առ հինս :

Երբոր կը պատապարէր հոռվլէական տուն մը , չար ողիներն կը հեռանային անտի . պատերածմաց մէջ իւր տոսկ ներկայութիւնն անգամ հարուածները կը զաղրեցնէր . եթէ կախուէր ի խելո նաւուն , մրդէկ կ'ապատէր զայն . եթէ զիկտատորաց և բգեշից տապարաւոր խրձոյն կապուած ըլլար , անոնց յաղթանակ-ները կը հոչակէր :

Եթէ զափնին անկողնոյն զլիոյն կողմը ծածկէր , կը նենացնէր չար երազները և կը բերէր խորովին ուրախալի պատկերներ : Նուիրական պահապան արքայազանց բնակութեան , զափնին պատմառ կ'ըլլար մողմիքրդեան սերը իրենց ձգելու : Վերջապէս իւր զալար կանաչութեան ներքե կեսարաց ճաղատ զլուխները կը ծածկէր շքեղորէն :

Դարձեալ զափնոյ ոստերն իրենց կը ձգեն երիտասարդութեան և նոյն իսկ մանկութեան հայեցուածք :

Մօր մը սիրտն որպիսի ուրախութեամբ և անձնասիրութեամբ պիտի բարախէ արգեօք , երբ տեսնէ որ իւր տղան , վարժարանէն ենելու միջոց , բազկացը մէջ կը զետեղէ իւր զափնեայ պսակը :

Կը մտնենք կենաց ասպարդին մէջ , ուրոշած ըլլալով զափնիներ քաղելու , այսինքն է՝ յաղթանակներ տանելու : Երանին անոր որ կարող է տերե մի կորզել ծառէն , — տերե մի միայն զափնոյ :

Դուք բանաստեղծք , բարեկամք իմ , ըսէր

ինձ թէ ո՛քան զիշերներ հակելով ժանրացոցիք ձեր զտուիր , ո՛քափ արտաստոք թափեցին ձեր աշերն , և այդ տերեն շրամնուեցա իւր ճիւզէն . և զուք , զինուորք , նոյնպէս բարեկամք իմ , ըսէր թէ ո՛քան կոիւներու մէջ անցուցիք ձեր օրերը , ո՛քափ արհամք ողողեցիք ձեր կործքը , և սակայն այդ անցաւոր տերեն շինկաւ ձեր սալից առջեւ :

* *

Մեր մատենագիրս , արուեստաւորք և հետազոտք հին յիշասակաց կամ նորանոր գաղափարաց , ճարտարութեան և անոր սրանչելեաց առջև , իրքեւ մտածող եմք՝ մողորեալ ի զաշտի , որ կը տեսնէ յանկարծ հրոյ մեքենային առ բնցն հասնիլը և անցնիլը , արագ և բազմայառաջ , բազմութեամբք մարդկան և հարասութեանց , զորս կը ձգէ իւր ետնէն : Կը ճանչնայ իւր տկարութիւնը այնին զօրութեան առջև , կը խոնարհի նիւթոյն այս յաղթանակին զիմաց . բայց երբ ահաւոր և սրանչելի երևոյթն կ'անհետանայ , կը կրկնէ մեզմիկ Պասկալի խօսքը այս խորհուակ եղեգին վրայ , զոր ի զար պիտի խորտակէր աշխարհ . և կ'ըսէ ինքն իրեն , թէ այս ամենայն կարողութիւն յառաջ կու զայ ի մտաց , միտքն է որ կ'արտազրէ այս հաշալիքը զիտութեան ձեռքով , և զիտութիւնն իսկ այն ժամանակ միայն բեղմաւոր կ'ըլլաց , երբ գրագիտութիւնն իրեն օգնական ունենայ :

Ֆէլու